ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակը համակարգում և խթանում է տեղում համագործակցությունը՝ ներառյալ Եվրոպական միության հետ համատեղ իրականացվող ծրագրերը:
2012 թվականից ի վեր համատեղ մշակված գործողությունների ծրագրերն օգնել են Հայաստանին համապատասխանեցնել օրենքներն ու ինստիտուտները մարդու իրավունքների, իրավունքի գերակայության և ժողովրդավարության ոլորտում եվրոպական չափանիշներին: Եվրոպայի խորհրդի Հայաստանի համար 2023–2026թթ. Գործողությունների ծրագիրն աջակցում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների իրականացմանը, դատահիրավական բարեփոխումների առաջմղմանը, կոռուպցիայի և կիբերհանցագործությունների դեմ ուղղված գործողություններին, քրեակատարողական հաստատություններում առողջապահական ծառայությունների և պրոբացիայի ուժեղացմանը, զինված ուժերում և կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների ամրապնդմանը, սոցիալական իրավունքների ապահովմանը, երեխաների, կանանց և փախստականների իրավունքների ամրապնդմանը, կանանց և երեխաների նկատմամբ բռնության կանխարգելմանը, ինչպես նաև ժողովրդավարական կառավարման ուժեղացմանը: Եվրոպայի խորհրդի ներկա Գործողությունների ծրագրի շրջանակում Հայաստանում մեկնարկեց նաև 2023 թվականին փախստականների հոսքին արձագանքման ծրագրերի փաթեթը:

ՏՎՅԱԼՆԵՐ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ

37 ԱՇԽՈՏԱԿԻՑ
29 ծրագրային աշխատակից

5 ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ 14 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳԻՐ
3 ԾՐԱԳԻՐ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՒ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ԳԼԿ) ԾՐԱԳՐԱՅԻՆ ՁԵՒԱՉԱՓՈՎ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ 21.9 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ Է:
ԴՈՆՈՐՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ԻՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՒ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ:

ՆԵՐԲԵՌՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ 2023-2026ԹԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ԻՆՉՈ՞Ի Է ՁԵՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ

Ձեր աջակցությունը հնարավորություն է տալիս Եվրոպայի խորհրդին եվրոպական չափանիշները վերածել իրական փոփոխությունների: Դոնորների ներդրումներն ապահովում են բարեփոխումների իրականացումը, ներդրումն ու կայունությունը՝ հզորացնելով ինստիտուտները, պաշտպանելով իրավունքները և ամրապնդելով ժողովրդավարական դիմադրողականությունը Հայաստանում:

Դիտեք Հայաստանում կանանց նկատմամբ բռնության վերացման և գենդերային հավասարության խթանման ուղղությամբ Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող աշխատանքների մասին տեսանյութը:

WWW.COE.INT/YEREVAN

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Արդարադատության ավելի արագ իրականացում: 12 դասընթացավարի վերապատրաստումը հաջորդեց 120 որակավորված հաշտարարներից բաղկացած խմբի ձևավորմանը, ինչը նպաստեց հաշտարարության հասանելիությանը և զարգացման երկարաժամկետ կայունությանը, դա իր հերթին դրական ազդեց դատարանների ծանրաբեռնվածության և գործերի կուտակումների նվազման վրա:

Պայքար տնտեսական հանցագործությունների դեմ: Ոչ-ֆինանսական հաստատությունների ներկայացուցիչներն ունեն բավարար գործիքակազմ ՓԼ/ԱՖ ոլորտի ներպետական իրավակարգավորումների պահանջները պահպանելու համար՝ այդպիսով ազգային չափանիշները համապատասխանեցնելով միջազգային լավագույն ստանդարտներին:

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

Զրո հանդուրժողականություն խտրականության և ատելության խոսքի նկատմամբ: Իրավապահ մարմինների, դատական համակարգի, կրթության, քաղաքացիական հասարակության և խոցելի խմբերի ավելի քան 300 ներկայացուցիչներ բարելավել են խտրականության և ատելության խոսքի դեմ պայքարի իրենց կարողությունները:

Կանանց հզորացում, քաղաքականությունների ամրապնդում: Հայաստանի 2025-2028թթ. Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը զգալիորեն ձևավորվել է Եվրոպայի խորհրդի առաջարկությունների և փորձագիտության շնորհիվ: Արդյունքում, 364 կին, այդ թվում՝ փախստականներ, բարելավել են իրենց հմտությունները, բարեկեցությունը և սոցիալական ներառականությունը:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Ծառայություններին հասանելիություն, երբ դա ամենակարևորն է: Աջակցություն է տրամադրվել Միգրացիայի և քաղաքացիության ծառայության զանգերի կենտրոնին: 2025 թվականի հունվարից ի վեր այն պատասխանել է ավելի քան 105000 զանգի: Վերապատրաստումների միջոցով հզորացվել են 256 առաջնագծի մասնագետի կարողությունները և գիտելիքները՝ քաղաքացիության, փախստականի կարգավիճակի և ժամանակավոր պաշտպանության վերաբերյալ հուսալի տեղեկատվություն տրամադրելու նպատակով: Արդյունքում, 2024-2025 թվականներին մշակվել է ավելի քան 28473 քաղաքացիության դիմում:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Ներառական տեղական ժողովրդավարությունը գործողության մեջ: Տեղական ինքնակառավարման մասին նոր օրենքի նախագծի բոլոր 13 գլուխները մշակվել են ներառական խորհրդակցական գործընթացի միջոցով՝ ամրապնդելով թափանցիկությունը, հաշվետվողականությունը և քաղաքացիների մասնակցությունը քաղաքականության մշակման գործընթացներում:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանություն: Երեք քրեակատարողական հաստատություններում ստեղծված մասնագիտական կենտրոնները բարելավում են ազատությունից զրկված անձանց զբաղվածությունը և վերաինտեգրման հեռանկարները, մինչդեռ հեռաբժշկության ծառայությունների ընդլայնումը, որը մատուցվում է Հայաստանի ութ խոշոր հիվանդանոցների կողմից, ապահովում է ազատությունից զրկված անձանց համար առողջապահական ծառայությունների ավելի լայն հասանելիություն:

Պրոբացիայի ծառայությունում վերականգնողական աշխատանքների բարելավում: Պրոբացիայի 60 աշխատակիցներ բարելավել են իրենց գիտելիքները՝ իրավախախտների շրջանում ագրեսիվ և բռնի վարքագիծը նվազեցնելու նոր ծրագրի իրականացման ուղղությամբ: Թմրամիջոցների և այլ նյութերի օգտագործման հետ կապված վերականգնողական ծրագիրը ներդրվել է Պրոբացիայի ծառայության և երեք քրեակատարողական հիմնարկների կողմից՝ Գործողությունների ծրագրի աջակցությամբ:

Կենսաբժշկության չափանիշի բարձրացում: Իրավական և քաղաքական շարունակական աջակցության շնորհիվ Հայաստանը վավերացրեց «Կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» կոնվենցիան (Օվիեդոյի կոնվենցիա):

Սոցիալական իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում ավելի ուժեղ վերահսկողություն: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի 23 աշխատակից ամրապնդեց սոցիալական իրավունքների խախտումները վերահսկելու կարողությունները: 40 իրավաբան մասնագետ բարելավեց աշխատանքային իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում փորձը HELP մասնագիտացված դասընթացի միջոցով: